Յակոբ կաթողիկոսի ծանօթները. (առեւտրական ամիրաներուն ամէնէն ջոջերը կը համարուին 18ը։ դարուն Սամուէլ Մուրատ և Ռափայէլ Հնդկաստանի մեծ թանգարներն ու Մխիթարեանց Վենետիկի Վանքին* մեծ բարերարները)։

Բայց Պոլիսի մէջ ժամանակակից ամէնէն նշանաւոր ոչ մէն է Ապրոյ Զէլէպին՝ եպարքոսին մարդն և խորհրդականը, Եղիազար Այնթապցի Կաթողիկոսին մտերիմն և պաշտպանը։

Տասն և եօթնեորդ դարին Երուսաղէմի Գրիգոր Պարոն — տէր Պատրիարքին ժամանակակից է նաեւ՝ Բաղիշեցի մահտեսի Ամիրազիզ ամիրխան բանասէր ու աստուածասէր ազան, որ շատ տեղ՝ մինչեւ Հռոմ իսկ՝ ուխտի գնաց, իմաստասէրի մը վայելուչ անխտրութեամբ և իր բարեկամ Պարոյ — տէր Պատրիարքը կարգեց զինքը Վանքին նուիրակ՝ քաղցրաբանութեանն և նախանձաւորութեանն համար։

Այսպէս՝ աշխարհական կրօնասէրը՝ իր հարջոյր բարքովն ու անքիծ վարքովն օգտակար եղաւ Երուսաղէմի Աթոռին վարչապետէ մը աւելի։ անուշ լեզու Ամիրազիզին ձեռքով ամէն մարդ առատ գրամ կու տար Վանքին՝ բաւ էր որ ինք բերան մը խնդրէր։ Եւ վախճանեցաւ Յերուսաղէմ։

1681ին պոլիսի հայերը քնակած կը դտնենք գլխաւորաբար գամ-դաթու, Վլանեա, Եէնի Գաթու, և ասոնց եկեղեցին էր Ս. Աստուածածին մայր եկեղեցին։ Սամաթիա ունէր 1000տուն, եկեղեցի՝ Ս Գիէորգ։ իսկ Եէնի Գաթու և Պալատ՝ եկեղեցի Ս. Հրեշտակապետ. Ղալաթիա՝ Ս. Գրիգ որ Լուսաւորիչ. Սկ էտար Եէնի-մահալլէ՝ Ս. Կարապետ։ Նոյն դարերն, ըստ եւրոպական ժամանակագրի մը, պոլիսի մէջ կային իբրև 40000 բնիկ և 30000 պանդուխտ Հայեր։

Ամիրաներէն Պատրիարք ալ եղածը կայ, ու թերեւս ժամանակին պատանդներուն կայ ի. նասատ՝ համաձայնութեամբ։ Հազար վեց հարիւր եօթանասունեւինի

* Վարժարանին այժ, բայց Վանքին ոչ մի բիոն մը։

Ծ. ԲԱԶՄԵՎ.